

**LEBOSHOE**  
 15 AUGUST 03  
 03 AUGUST 03  
 LEBO SHO E  
 Fair  
 Expo Beirut  
 Ain El-Mreisseh - next to Phoenicia Hotel  
 Telefax: 01/361 040-01/361 041 Mobile: 03/611 440

# ԱԶՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԹԵԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE جريدة يومية سياسية وأدبية - الدورية للثقافة والإثرائية  
 1500 L.Ո. 76րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 117 (21459) ԵՐԵՎԱՆԻ, 29 ՅՈՒՆԻՍ 2003 10 ԷՁ

ՄԵՌՈՒՍԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՂ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ՌԻՃԵՐ  
 ԿԸ ՄՊԱՆԵՆ ԴԸՆ ԼԱՏԵՆԻ  
 ՎԵՅ ՀԵՏԵՒՈՐԴՆԵՐ

Մեռուական Արաքիոլ ապահովական ուժեր երկրի հիւսիսային Քասիմ նահանգին մէջ երէկ սպանած են Ուսամա Դըն Լատէնի ցանցին առնչուող վեց փնտախներ: Գործողութեան ընթացքին սպանուած են նաեւ երկու ոստիկաններ: Մեռուական Արաքիոլ ներքին գործոց նախարարութեան բանբեր տեղեկացուց, որ սպանուած վեց սեռուցիները իշխանութիւններու կողմէ հետապնդուած են Ենթադրուող կասկածելիներու ցանկին մաս կը կազմէին:

## ՄՊԻՏԱԿ ՏԱՆ ՄԷՉ ՊՈՒՇ ԱՅՍՕՐ ԿԸՆԴՈՒՆԻ ՇԱՐՈՆԸ



Պաղեստինցի եւ օտար ցուցարարներ կը փորձեն քանդել իսրայէլեան ցանկապատ մը

Պուշ - Շարոն տեսակցութեան նախօրեակին, Իսրայէլ վիճողական քանի մը միջոցառում եւս որդեգրեց պաղեստինցիներուն հանդէպ: Նոր քայլերը առնելով՝ Իսրայէլ կ'ուզէ երաշխաւորել լաջողութիւնը վարչապետ Արիէլ Շարոնի եւ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշի հանդիպումին:

Կիրակի երեկոյեան, այն պահուն երբ Շարոն Ուաշինկթըն կը հասնէր, Իսրայէլի կառավարութիւնը յայտարարեց, որ պատ պիտի արձակէ 540 պաղեստինցի բանտարկեալներ, որոնց կարգին են Համասի եւ Իսլամական ժիհատի 210 անդամներ:

Իսրայէլ նախապէս կը պնդէր, որ արձակուած շարժումներու անդամներ պատ պիտի չարձակուին: Ապա արձակուելիք արձակուածներէն զրեթէ ոչ մէկը բանտարկուած էր ապահովական հարցերու համար: Պաղեստինեան շարժումները թէեւ ողջունեցին ապատ արձակումն ուր շարժումը, բայց տալիս պալին անբարար նկատեցին: Պաղեստինցիները կը պահանջեն ապատ արձակումի բոլոր բանտարկեալներուն, որոնց թիւը կը հասնի վեց հազարի:

Իսրայէլ կատարեց այլ փոփոխումներ երբ երէկ առաւօտուն բանակը յայտարարեց, թէ քանդած է հրէական բնակեցման վայրի մը պատկանող կեդրոն մը Այսրյորդանանի մէջ: Հեպոնի շուրջ գտնուող չորս բլուրներու վրայ հրէաները յարած էին վրաններ շրջանը վերածելով հրէական ապօրինի բնակեցման վայրի մը:

Բանակը աւելցուց, որ վրանները քանդուեցան եւ որոշումին ընդդիմացող երկու հրեաներ ձերբակալուեցան:

Խաղաղութեան ճամբու քարտէսը կը պահանջէ, որ ապօրինի կերպով կառուցուած բլուր կեդրոնները քանդուին: Իսրայէլ ցարդ ամբողջութեամբ չէ կիրարկած այս բանին:

Իսրայէլեան բանակը սկսած է նաեւ վերցընել անցարգելները պաղեստինեան քաղաքներէն: Իսրայէլը ճամբաներէն դիւրացընելու համար պաղեստինցիներուն երթելու կը: Բանակը կ'ըսէ, որ այս միջոցառումին նպատակն է ապահովել շարժելու ապատութիւնը, ինչպէս նաեւ՝ վերաշխուծացնել պաղեստինեան տնտեսութիւնը: Իսրայէլ իր հողերուն վրայ աշխատելու արտօնագիր տուած է հազարաւոր պաղեստինցի գործաւորներու: Իսրայէլ մտադիր է նաեւ պաղեստինեան երկու քաղաքներու ապահովութիւնը վերստին պաղեստինեան իշխանութեան յանձնելու: Սակայն յստակ չէ տակաւին, թէ ո՞ր քաղաքներն են անոնք:

Իսրայէլ ջնջեց նաեւ պաշտօնական հանդիսութիւնը Այսրյորդանանի շուրջ ապահովութեան պարիսպի առաջին բաժնի բացման: Պաշտպանութեան նախարարութեան բանբերը ըսաւ, որ կառուցումի աշխատանքը ընթացքի մէջ է, սակայն իշխանութիւնները յարմար նկատած են ջնջել պաշտօնական հանդիսութիւնը: Իսրայէլը յարմար նկատած է նաեւ քաղաքները, ամերիկեան ուժերը նոր յարձակումներու կ'ենթարկուէին՝ զոհեր ու վիրակալներ տալով: Միեւնոյն պահուն, ամերիկեան ուժերուն հրամանատարութիւնը կը յայտարարէր, որ Սատտամ Հիւսէյնի շուրջ օդակը սկսած է աւելի սեղանուի եւ թէ շուտով այ պիտի ձերբակալուին:

Իշխող խորհուրդը այս շաբթուան ընթացքին պիտի ունենայ շարք մը հանդիպումներ, մշակելու համար ուղեգիրը խորհուրդին:

## ՄՈՒՍԹԱՖԱ ՄԻՐՈ ԿԸՆԴԳԾԵ ՍՈՒՐԻՈՅ, ԻՐԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԵՒՈՅ ՄԻՋԵՒ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆՐԱՎԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Անգարա այցելութեան առիթով, Մուրիոյ վարչապետ Մուսթաֆա Միրօ ըսաւ, որ շրջանային երկիրներ, ինչպէս՝ Թուրքիա, Իրան եւ Սուրիա պէտք է ամրապնդեն իրենց կապերը՝ ղեկն դնելու համար Միջին Արեւելքի նոր քարտէս մը գծելու ամերիկեան ճիգերուն:

Միրօ ղիտել տուաւ, որ ամբողջ աշխարհը գիտէ, թէ Ամերիկա կ'ուզէ նոր համակարգ մը հաստատել Միջին Արեւելքի մէջ: Հետեւաբար, Թուրքիա, Իրան, Սուրիա եւ շրջանային այլ երկիրներ պէտք է թափ տան գործակցութեան, որովհետեւ եթէ առանձին մնան՝ դիւրին պիտի ըլլայ ենթարկուել Իրաքի ճակատագիրին, մինչ եթէ ուժերը միանան, ամուր ճակատ մը կը կազմուի ամերիկեան քաղաքականութեան ու ծրագիրներուն դէմ:

Միրօ աւելցուց, թէ Ուաշինկթըն, որ ներկայիս կ'իշխէ Իրաքի մէջ, Սատտամ Հիւսէյնի չափ «գէշ դրացի է»: Ան ըսաւ նաեւ, որ Դամասկոս կ'ուզէ, որ Իրաքի գրաւումը շուտով աւարտի եւ ամերիկեան ուժերը հեռանան ամբողջ շրջանէն:

Սուրիա - Թուրքիա - Իրան եռեակը մտահոգ է յատկապէս հիւսիսային Իրաքի իրավիճակով, որը մեծամասնութիւն կը կազմեն քրիստոները: Երեք երկիրները, որոնք իրենց կարգին ունին քրիստոնէական կարեւոր թիւ մը, մտահոգ են, որ սահմանակից Իրաքի մէջ քրիստոներ անկախութիւն հռչակեն՝ խոտովութիւններ հրահրելով իրենց հողերուն վրայ:

Նշենք, թէ 17 տարուան մէջ առաջին անգամն է, որ սուրիացի վարչապետ մը կ'այցելէ Թուրքիա:

## ՀԱՐԻՐ ՏՈԿՈՍ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԿԻ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արարչական նախագահ Հայտար Ալիեի առողջութեան մասին կը տրուին հարիւր տոկոս հակասական լուրեր:

Հայտար Ալիեի որդին եւ հաւանական յաջորդը՝ Իլիամ երէկ յայտարարեց, թէ իր ութունամեայ հայրը, որ կը գտնուի Անգարայի «Կիւլիանէ» հիւանդանոցը, յաւիճակի մէջ է եւ այսպէս երկրին ընդդիմադիրները՝ սուտ եւ սխալ լուրեր տարածելու յանցանքով:

Միւս կողմէ, ըստ միջազգային լրատու գործակալութիւններու՝ Ալիեի առողջական վիճակը վտանգաւոր պահեր կ'ապրի, իսկ հայրենի «Արմէնփրէս» լրատու գործակալութեան համաձայն՝ Հայտար Ալիեի վիճակը օրհասական է:

Թրքական «Միլլիիթ» օրաթերթին համաձայն, Ալիեի վիճակը այնքան վատթարացած է, որ Թուրքիոյ նախագահ Սեւէր Պոլիս իր այցելութիւնը ընդհատած է երէկ եւ անմիջապէս վերադարձած՝ Անգարա: Ըստ «Ապատութիւն» ռատիոկայանին, «Կիւլիանէ» հիւանդանոցը խիստ հսկողութեան տակ է եւ ոչ մէկուն կը թոյլատրուի մուտքն ու ելքը...

## ՆԱԽԱԳԱՅ ՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷԿ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Հարաւային Կովկասի հարցերու գծով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Հէյկի Տալվեթիէի գլխաւորած պատուիրակութիւնը, որ Հայաստան կը գտնուի շրջանային այցելութեան մը ծիրէն ներս:

Նախագահ Քոչարեան ողջունեց Հարաւային Կովկասի յատուկ ներկայացուցիչ մը նշանակելու Եւրոպական Միութեան որոշումը, որ վկայութիւն է շրջանին նկատմամբ Ե. Միութեան հետաքրքրութեան: Ան ղիտել տուաւ, որ Հայաստան որդեգրած է եւ հետեւողականօրէն կը շարունակէ եւրոպական կառուցելուն համարումը՝ քաղաքականութիւնը: «Մենք անիկա կ'ընենք համոզումով եւ կը ձգտենք կառուցել եւրոպական չափանիշներու վրայ հիմնուած պետութիւն մը», յայտնեց Քոչարեան:

Կողմերը քննարկեցին Եւրոպական Միութեան - Հարաւային Կովկաս եւ Եւրոպական Միութեան - Հայաստան յարաբերութիւններու ընդարձակման վերաբերող խնդիրներ: Արժարձուեցան մահապատիժի ջնջման, ընտրական համակարգի կատարելագործման եւ Եւրոպական Միութեան հետագայ քաղաքականութեան մէջ Հարաւային Կովկասի դերին առնչուող հարցեր: Նշելով, որ Եւրոպական Միութիւնը խորապէս շահագրգռուած է Հարաւային Կովկասի երկիրներու հետ յարաբերութիւններու ամրապնդմամբ, Տալվեթիէ ղիտել տուաւ, որ պիտի ջանայ իր լիազօրութիւնը առաւելագոյն չափով օգտագործել շրջանային գործակցութեան պարգագման եւ առկա խնդիրներու լուծման համար:

Տալվեթիէի գլխաւորած պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ Հայաստանի արտաքին նախարար Վարդան Օսկանեանի հետ:

Եւրոպական Միութեան ներկայացուցիչներուն հետ հանդիպում ունեցան նաեւ Հայաստանի Ազգային ժողովի փոխ նախագահ Վահան Յովհաննիսեան: Հանդիպումին ընթացքին Յովհաննիսեան ղիտել տուաւ, որ վերջին շրջանին Հայաստանի հասցէին Պաքուէն հնչող յարձակողապաշտ յայտարարութիւնները, որքան ալ նախընտրական բնոյթ ունենան, կրնան դժուարացնել Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանակցութիւնները: «Այս յայտարարութիւնները ժողովուրդին մօտ անհանդուրժողութեան մթնոլորտ կը ստեղծեն», ընդգծեց Վահան Յովհաննիսեան:

Call **1486**

Հարազատ զանգեր՝ Նոքիա, Էրիքսոն, Սիմքոն, Մոթորոլա, Սամսոնկ, Ալքաթել, Սակէմ բջիջային հեռաձայններու յարմարող

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒՆԱԿՆԵՐՈՒ ԶՆԱԳԵՐ	ԱՐԱՔԵՐՈՆ ԶՆԱԳԵՐ
Կարմիր կապուցներ	Յարութ Փանդուրեան
Իմ միակ սերը	Անուշ Հարմարեան
Նուն	Շողովրդային
Օրեր օրեր	Անուշ Հարմարեան
Ով իմանար	Անուշ Հարմարեան
Շիրիաճի	Շողովրդային
Երես	Շողովրդային
Քարտիկ Գայաստան	Ազգային
Շատ շատ	Արարատ Անարդեան
Շորմաք Եւ	Շողովրդային
Չորեքիկ Անդրիկ	Շողովրդային
Չարմ	Շողովրդային
Չարմ Գարուն	Անուշ Հարմարեան

ՆՇԱՆԱԿՆԵՐ՝ Նոքիա, Էրիքսոն, Սիմքոն, Մոթորոլա, Սամսոնկ, Ալքաթել, Սակէմ բջիջային հեռաձայններու յարմարող

HELLO	10100
GOOD DAY	10873
HI F HOME	10861
Love you	10977
Miss You	31094
Together Forever	31053
I love you	31057
je t'aime à la folie	31278
je pense à toi	31273

Get Busy NEW S. Paul 81913  
 In Da Club 50 Cent 81688  
 Pink Panther Warner 80258  
 30 Minutes TATU 81941  
 I'm Glad J.Lo 81913  
 May Be Enrique 81603  
 Comme Toi G. D'ib 81357  
 On va S'aimer G.M. 81933  
 Tu M'as Promis la Grid 81925

## ԱՍԵՐԻԿԵԱՆ ՌԻՃԵՐՈՒ ԴԷՍ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ

### ԻՐԱՔԻ ԻՇԽՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՕՐԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՆՇԱՆԱԿԵՆԱԿԱՆ ԱՐԱՐՆԵՐ

Մինչ Իրաքի իշխող խորհուրդը հանդիսութեան գործելակերպին, ինչպէս նաեւ նշանակելու կարեւոր նախագահ մը եւ նախարարներ, ամերիկեան ուժերը նոր յարձակումներու կ'ենթարկուէին՝ զոհեր ու վիրակալներ տալով: Միեւնոյն պահուն, ամերիկեան ուժերուն հրամանատարութիւնը կը յայտարարէր, որ Սատտամ Հիւսէյնի շուրջ օդակը սկսած է աւելի սեղանուի եւ թէ շուտով այ պիտի ձերբակալուին:

Իշխող խորհուրդը այս շաբթուան ընթացքին պիտի ունենայ շարք մը հանդիպումներ, մշակելու համար ուղեգիրը խորհուրդին:

Նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Հարաւային Կովկասի հարցերու գծով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Հէյկի Տալվեթիէի գլխաւորած պատուիրակութիւնը, որ Հայաստան կը գտնուի շրջանային այցելութեան մը ծիրէն ներս:

Նախագահ Քոչարեան ողջունեց Հարաւային Կովկասի յատուկ ներկայացուցիչ մը նշանակելու Եւրոպական Միութեան որոշումը, որ վկայութիւն է շրջանին նկատմամբ Ե. Միութեան հետաքրքրութեան: Ան ղիտել տուաւ, որ Հայաստան որդեգրած է եւ հետեւողականօրէն կը շարունակէ եւրոպական կառուցելուն համարումը՝ քաղաքականութիւնը: «Մենք անիկա կ'ընենք համոզումով եւ կը ձգտենք կառուցել եւրոպական չափանիշներու վրայ հիմնուած պետութիւն մը», յայտնեց Քոչարեան:

Կողմերը քննարկեցին Եւրոպական Միութեան - Հարաւային Կովկաս եւ Եւրոպական Միութեան - Հայաստան յարաբերութիւններու ընդարձակման վերաբերող խնդիրներ: Արժարձուեցան մահապատիժի ջնջման, ընտրական համակարգի կատարելագործման եւ Եւրոպական Միութեան հետագայ քաղաքականութեան մէջ Հարաւային Կովկասի դերին առնչուող հարցեր: Նշելով, որ Եւրոպական Միութիւնը խորապէս շահագրգռուած է Հարաւային Կովկասի երկիրներու հետ յարաբերութիւններու ամրապնդմամբ, Տալվեթիէ ղիտել տուաւ, որ պիտի ջանայ իր լիազօրութիւնը առաւելագոյն չափով օգտագործել շրջանային գործակցութեան պարգագման եւ առկա խնդիրներու լուծման համար:

Տալվեթիէի գլխաւորած պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ Հայաստանի արտաքին նախարար Վարդան Օսկանեանի հետ:

Եւրոպական Միութեան ներկայացուցիչներուն հետ հանդիպում ունեցան նաեւ Հայաստանի Ազգային ժողովի փոխ նախագահ Վահան Յովհաննիսեան: Հանդիպումին ընթացքին Յովհաննիսեան ղիտել տուաւ, որ վերջին շրջանին Հայաստանի հասցէին Պաքուէն հնչող յարձակողապաշտ յայտարարութիւնները, որքան ալ նախընտրական բնոյթ ունենան, կրնան դժուարացնել Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման բանակցութիւնները: «Այս յայտարարութիւնները ժողովուրդին մօտ անհանդուրժողութեան մթնոլորտ կը ստեղծեն», ընդգծեց Վահան Յովհաննիսեան:



Ամերիկացի վիրատու զինուորներ հիւանդանոց կը փոխադրուին

### ՊՅՈՒՆԻՆԻ ԾԱՄԲԱՆ ԲՈՒՆՈՒՆ ԱՌՋԵՒ ՄԻՇՏ ԲԱՅ ԵՂԱԾ Է

Կ'ԸՍԵ ՄԻՇԵԼ ՄԵՐ

Նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշել Մերը երկն տուալ մավոյ ստույիս մը, որուն ընթացքին կատարեալ վստահութիւն յայտնեց դատական իշխանութիւններուն հանդէպ, որոնք արդէն իսկ ստանձնած են Պրըզիդինի պինեալ միջադէպը:

Մեր յոյս յայտնեց, որ խորհրդարանի նախագահ Նեպիի Պրըզի կը տեղեկանայ միջադէպին բոլոր ծալքերուն:

Մեր շնորհակալութիւն յայտնեց առողջապահութեան նախարար Սիլվան Ֆրենտիէին՝ իր ցուցաբերած զօրաւոր կեցուածքին համար: Ան ըսաւ, որ Ֆրենտիէի անուանի քաղաքական ընտանիքի մը պատկան է, որ լատաւեղեակ է հարցերու հարթեան:

Մեր շեշտեց, որ Պրըզիդինի մէջ ոչ ոք սպառնացած է երեսփոխանի կամ կրակ բացած անոր ուղղութեամբ: Մեր ըսաւ, որ ինք անձամբ Պրըզիի ներկայութեամբ դէմ յանդիման կու գայ յետեւ երեսփոխանի, որ կ'ըսէ, թէ Պրըզիդինի մէջ անհատ մը իր ճամբան փակած է:

Մեր աւելցուց, որ բոլոր յայտարարութիւնները, որ կատարուած են նշեալ միջադէպին մասին անձեղծ են: Ան նկատել տուաւ, որ երեսփոխան Նեպի կ'աւտուի հետ պատահած միջադէպը Պրըզիդինի 2 քմ. անդին պատահած է:

Մեր ընդգծեց, որ Պրըզիդինի ճամբան բոլոր հրահրեալներուն առջեւ բաց էր եւ ուրիշներ որեւէ հարց չունեցան Կապրիէլ Մերի տունը հասնելու: Մեր նկատել տուաւ, որ Պրըզիդինի բնակիչները ճամբաներ փակող աւազակախումբեր չեն եւ ոչ ալ եղած են, որովհետեւ անոնք ժողովրդավարութիւնը յարգող գիղաքաղաքի մը պատկան են:

Անդրադառնալով նախագահ Վոր. Էմիլ Լահուտի եւ ներքին գործոց նախարար Էլիաս Մերի յայտարարութիւններուն Միշել Մեր ըսաւ, որ անոնք գիտակից եւ պատասխանատու մարդոց յայտարարութիւններն են, աւելցնելով, որ իր յարաբերութիւնները իր պակին է. Մերի հետ շատ լաւ վիճակի մէջ են:

Մեր շնորհակալութիւն յայտնեց նաեւ մարտնիներու Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքին աւելցնելով, որ Սֆէյր պատրիարքի կեցւածքները միշտ փրկարար են երբ մարդիկ կը փորձեն նման միջադէպեր ստեղծել:

Մեր տեղեկացուց, որ այսօր պիտի այցելէ Տիման հանդիպելու եւ անձամբ շնորհակալութիւն յայտնելու Սֆէյր պատրիարքին:

### ԱՅԷՅՐ ԿԸ ՄԵՐԺԷ ՔԱՆՆՈՒՊԻՆԻ ԱՌՆՉՈՒՈՂ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Տիմանի մէջ մարտնիներու Սֆէյր պատրիարքը երկն ընդունեց շարք մը պետական բարձրաստիճան անձնաւորութիւններ, որոնց հետ քննարկեց Պրըզիդինի պինեալ միջադէպին առնչուող հարցեր, ինչպէս նաեւ Քաննուպինը վարչապետութեան վարչի վերածելու առնչուող խնդիրներ:

Սֆէյր պատրիարքը ընդունեց պատուիրակութիւն մը, որուն մաս կազմեցին երեսփոխան Ժըպարան Թոք եւ Քաննուպինի շրջանի բարձրաստիճան անձնաւորութիւններ: Սֆէյր յայտնեց, թէ կը մերժէ Քաննուպինը իր հոգեւոր, սուրբ եւ հնութիւններով հարուստ արժանիքներով հանդերձ վերած-

լի վբօսաշրջութեան յատուկ վայրի մը, նկատել տալով, որ մարտնի պատրիարքութիւնը յստակ միջոցառումներու դիմած է Քաննուպինը պահպանելու նպատակով:

Սֆէյր պատրիարքը ընդունեց երեսփոխաններ Նապէմ Խուրի, Նեպիլ Տը Ֆրէյժը, ինչպէս նաեւ Քըրնէթ Շահուանի Հանդիպումի մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կազմեցին երեսփոխաններ Ֆարէս Սուլայտ եւ Մանսուր Պոն, ինչպէս նաեւ Սամիր Ֆրենտիէ:

**ՌԻՇԱԳՐՈՒԹԻՒՆ**  
● Տրամադրելի է ատաղձագործի գործատեղի մը: Հեռ. 01-250326:


ՄԵՍՐՈՊԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՌԻԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ ԴԱՇՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԱՅՆ ՊԱՐՈՒԷ Սայրիներու անտառ, Ռաշիտ Նախլի տուն - Բանգարան Կիրակի, 3 Օգոստոս 2003, Ճաշ եւ նուագ՝ Ժենըր Պարուք ճաշարանի մէջ Դիմել Մեսրոպեանի քարտուղարութեան, հեռ. 01-260504 կամ 03-569861:

### ՆԱԽԱԳԱԿ ԼԱԿՈՒՏ ԿԸ ՇԵՇԷ ՆԵՐԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՂԴՄԱՆ ԱՆԿՐԱԺԵՇՈՒԹԻՒՆԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկն յայտարարեց, որ դատական իշխանութիւններէն պահանջած է անմիջապէս կատարել Պրըզիդինի պինեալ միջադէպի հետաքննութիւնները եւ յանցագործները ենթարկել ամենախիստ պատժամիջոցներու:

Պատասխան մէջ նախագահ Լահուտ խստացաւ, որ Պրըզիդինի Մարժապա ճամբուն վրայ երեսփոխանի մը եւ քաղաքագէտներու դէմ պինեալ միջադէպին ծալքերը անպայման պիտի յայտնաբերուին:

Նախագահ Լահուտ երկն իր այցելու երեսփոխաններուն յայտնեց, որ իշխանութեան Վորակից թէ ընդդիմադիր բոլոր կողմերուն առիթ պիտի տայ քաղաքական գործունէութիւնի ծաւալելու: Ան աւելցուց, որ երկրին մէջ քաղաքական գործունէութիւնը պետք է հեռու մնայ բարոյական կամ նիւթական որեւէ ճնշումէ, որպէսզի մեծաւոր ներկայացուցած է բովանդակած պատասխանատուութեան ծիրէն ներս, նպատակ ունենալով երկրին գե-



Լահուտ կ'ընդունի դեսպան Ֆանժիրոն

րագոյն շահերու ապահովումը կամ անոր ծառայութիւնը: Ան անհրաժեշտ նկատեց կիրարկուել ժողովրդավարական բոլոր սկզբունքներուն, որոնք կը պարփակեն ապատութիւններու յարգումը, յատկապէս՝ գաղափարի եւ մտքի ապատութիւնը:

Նախագահ Լահուտ հաստատեց, որ ներկայ պայմանները բոլորին կը պարտադրեն անբախտելի ներլիբանանեան միասնականութիւնը նկատել տալով, որ տնտեսական, ընկերային եւ բարգաւաճման շարք մը ծրագիրներ կարիք ունին լուծման, որովհետեւ

անոնք անմիջակաօրէն մաս կը կազմեն քաղաքացիներու առօրեային, իսկ քաղաքացիները պետութենէն կը պահանջեն ամէն շանք ի գործ դնել ամբողջացնելու համար նշեալ ծրագիրները:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երկն ընդունեց երեսփոխաններ Փիեռ Հըլուն, Ռոպէր Դանէմը, Սալէի Խէյրը, Ղասսան Միսայէրը եւ Քարիմ Ռասիմ, ինչպէս նաեւ Լիբանանի մէջ Մարտի դեսպան Ապտէլ Ժելիլ Ֆանժիրոն եւ Արաբական Հիւանդանոցներու Համադաշնակցութեան մէկ պատուիրակութիւնը:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՊԵՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ երկն ընդունեց Հաւատարմութիւն Դիմադրութեան երեսփոխանական պլոքի նախագահ, երեսփոխան Մոհամէտ Ռասալը, որուն հետ քննարկեց տեղական, շրջանային եւ միջազգային հարցեր: Հանդիպումին շեշտուեցան ազգային միասնականութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը:

● ՍՈՒՐՈՒՅՆ նախագահ Պաշտալ Սատ երկն Գամակոսի մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշել Սըմահան, ինչպէս նաեւ նախկին շրջանային իրադարձութիւնները եւ երկու երկիրներուն շահերուն առնչուող հարցեր:

● ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երկն Պուրոս պալատին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Կամպիոյ, Մալիի եւ Չամպիոյ նոր դեսպանները եւ անոնցմատացաւ անոնց հաւատարմագիրները, պանոնք ներկայացնելու համար նախագահ Վոր. Էմիլ Լահուտին:

Օպէյտ ընդունեց նաեւ ՄԱԿի մէջ Լիբանանի ներկայացուցիչ Սամիր Քուրունֆուլը, որուն հետ քննարկեց շրջանային հարցեր: ● ՓՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏ Իսամ Ֆարէս երկն նախագահեց Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկին կացութիւնը քննող նախարարական լանձնախումբի ժողովին, որուն մասնակցեցան նախարարներ

Պահիթ Թապպարա, Մարուան Համատէ, Ասատ Հըրտան, Ֆարէս Պուէյպ, Միշել Մուսա, Ալի Խալիլ եւ Ապտալլա Ֆարհաթ:

Ժողովին քննարկուեցան ապահովագրութեան առնչուող հարցեր եւ որոշուեցաւ ապահովագրութեան սնտուկին յատուկ վերջնական ծրագիր մը պատրաստել, քննել եւ Սնտուկին տնտեսական կացութիւնը:

● ՊԵՅՐՈՒԹԻ նախագահ Պաշտալ Սատ երկն Գամակոսի մէջ ընդունեց տեղեկատուութեան նախարար Միշել Սըմահան, ինչպէս նաեւ նախկին շրջանային իրադարձութիւնները եւ երկու երկիրներուն շահերուն առնչուող հարցեր:

● ԿԵՆՍՈՒՐՈՒՅՆ նախարար Ֆարէս Պուէյպ երկն ընդունեց Լիբանանի մէջ Ճափոնի դեսպան Նաուրո մասաքիւն, որուն հետ քննարկեց շրջանային իրադարձութիւնները: Անքի արարեց իր պաշտօնավարութիւնը:

● ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ կարգերու ուսուցիչներու լիկայի Հիւսիսային Լիբանանի մաս-

նաճիղի մէկ պատուիրակութիւնը երկն այցելեց վարչական հարցերու եւ արդարադատութեան խորհրդանշական յանձնախումբի նախագահ Միշալէ Տահէրին, որուն հետ քննարկեց ուսուցիչներու ամսական աշխատավարձերուն առնչուող հարցեր:

● ՀԱՆՐՈԳՈՒՅՆ շինութեանց, փոխարութեան, ուժանիթի եւ շուրի հարցերու խորհրդարանական յանձնախումբը երկն գումարեց նիստ մը գլխաւորութեամբ յանձնախումբի նախագահ երեսփոխան Մոհամէտ Քապպանին, ներկայութեամբ առեւտուրի եւ տնտեսութեան նախարար Մարուան Համատէին: Ժողովին որոշուեցաւ ինքնաշարժներու պարտադիր ապահովագրութեան օրէնքը վերատեսութեան եւ փոփոխութեան ենթարկել: Ներքին գործոց նախարարութեան առաջարկուեցաւ մօտ ապագային սկսել ինքնաշարժներու մէքանիքի ստուգման աշխատանքներուն Չախլէի, Սայտայի եւ Հարաի մէջ:

Շարք՝ էջ 3

### ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ՎԷՃԸ ԿԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՒԻ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԷԼԻԱՍ ՄԵՐ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մերը երկն ճայնասփիռի «Մոնթէ Քարլո» կայանին հետ ունեցած իր հարցազրոյցին մէջ անդրադարձաւ Պրըզիդինի պինեալ միջադէպի մեղսակիցներուն դէմ որդեգրուած պատժամիջոցներուն եւ վստահեցուց, որ իբրեւ ներքին գործոց նախարար հաւասար հեռաւորութեան վրայ կը մնայ բոլորէն:

Մեր նկատել տուաւ, որ իր հօր՝ նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշել Մերի եւ անոր եղբոր՝ նախկին երեսփոխան Կապրիէլ Մերի միջեւ բանավեճը «հին է ու նոր», իսկ ընդդիմադիրները չարաչար կ'օգտագործեն վայն:

Մեր յայտնեց, որ Միշել Մերի զօրակցող վեց անձեր ձերբակալուած եւ բանտարկուած են, ենթարկուելու համար դատավարութեան:

Ան նկատել տուաւ, որ իր հօր եւ հօրեղբոր միջեւ բանավեճը նոր չէ, իսկ գիղաքաղաքի մը մէջ, ուր բնակչութեան 95 առ հարիւրը Միշել Մերին կը քուէարկէ, նման՝ ընդդիմադիրներուն յատուկ ճաշկերոյթ մը կազմակերպելը Միշել Մերի զօրակիցները կը մղէ միջադէպեր ստեղծելու եւ ապա օգտագործելու այդ միջադէպերը:

«Ինծի համար կարեւորագոյնը կը մնայ լուծել նման հարցեր, որովհետեւ ես ներքին գործոց նախարարն եմ Լիբանանի եւ ամբողջ լիբանանցիներուն, բոլոր քայլերս առած եմ պարտականութեան գիտակցութեամբ, բայց իբրեւ պետութեան անդամ ստիպուած եմ բոլոր քաղաքացիներէն՝ ըլլան անոնց իշխանութեան զօրակից թէ ընդդիմադիր, հաւասար հեռաւորութեան վրայ մնալ», ըսաւ Մեր:

Մեր շեշտեց նաեւ, որ ընդդիմութիւնը պետք է շինել ըլլալ, եւ պատշաճ չէ որ ընդդիմութիւնը ուղղուի Կապրիէլ Մերի տունը եւ գերպայնութիւններ արթնցնել, որուն պատճառով ամբողջ գիղաքաղաքը հարցերու մէջ խրի:

**Balkan Holidays**  
TRANSLITEX TOURS  
ԴԵՊԻ ՎԱՌՆԱ ԵՐՁԱՊՏՈՅՆԵՐՈՒ  
36 ՏԱՐՈՒԱՆ ՓՈՐՉԱՌՈՒԹԻՒՆ  
Varna Summer  
245\$ սկսեալ  
Balkan Holidays  
VARNA EXPERT NO. 1  
Look after No. 1. Let No. 1 Look after you.  
CORNICH MAZRAA WAKF ROOM CENTER - BANK AUDI  
TEL.: 1/304553 - 304563 FAX: 9611/310424 BEIRUT - LEBANON

«ԱՉԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ ՍԱՆԱԿՑԷ ԵՒ ԵՂԻՐ ՊԵՅՐՈՒԹ-ՎԱՌՆԱ-ՊԵՅՐՈՒԹ ՕԳԱՆԱՒՅԻՆ ՏՈՍՄ ՇԱՀՈՂ 10 ԲԱՆՏԱՒՈՐՆԵՐԸ ՄԷԿԸ  
«Ազգակ»ի էջերով յառաջիկայ շաբաթներուն ընթացքին պիտի հրապարակուին գարգացման մրցանքի 10 հարցարաններ, որոնցմէ իւրաքանչիւր կը բաղկանայ 5 հարցումները:  
Իւրաքանչիւր մրցանքի 5 հարցումներուն ձեռք պատասխանողները վիճակաձգութեամբ պիտի ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրութ-Վանա-Պէյրութ օդանաւային տոմսակ մը:  
Իւրաքանչիւր մրցանքի վերապահուած է մէկ տոմսակ:  
Ստորեւ՝ մրցանքի օրենքները:  
● Իւրաքանչիւր մասնակցի կրնայ միայն մէկ անգամ մասնակցիլ մրցանքին: Այսպէս, օրինակ, մրցանքի մէկին կարելի չէ մասնակցիլ միեւնոյն անունը կրող երկու կրթոցով: Սակայն իւրաքանչիւր անձ կրնայ մասնակցիլ բոլոր 10 մրցանքներուն, այսպիսով մէկ անգամ մրցանքներ բախտաւոր մասնակցի դառնալու առիթ ունենալով:  
● Մրցանքին մասնակցելու համար պետք է օգտագործել «Ազգակ»ի էջերուն մէջ տեղադրուած կտրօքը եւ ոչ լուսապատճեններ:  
● Շարքարանները պետք է լեցուին եւ խմբագրատունը ներկայացուցի առաւելագոյնը հարցարանին հրապարակումն երկու օր ետք:  
● «Ազգակ»ի աշխատակիցներ չեն կրնար մասնակցիլ այս մրցանքին:



ՆՇԱՐ

ՔՈՄՍՅՆՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՔՈՄՍՅԻ

Ազգային անկախության ընդդիմությունը գլխավոր խօսքով «ԵՊՄՍ»-ի քննարկումը...

Թերթը կը հաղորդէ, թէ ԵՊՄՍ-ի քննարկումը...

Ազգային անկախության ընդդիմությունը...

Ազգային անկախության ընդդիմությունը...

Ազգային անկախության ընդդիմությունը...

Ազգային անկախության ընդդիմությունը...

Ազգային անկախության ընդդիմությունը...

«ԱԶՍ ՕՐ»

ԹՐՔԱԿԱՆ ՔԱՐԱՊԵՂՁՈՒԹԻՒՆ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ «ՍՈՒՏ» ՄԵՂԱԳՐԱՆՔՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԼԱՄԱՐ

Թուրքիայի վարչապետ Կեմալ Կարամուշը...

Այս գիրքը, որուն հեղինակներն են...

Գիրքը մասնամասնական կը ներկայացնէ ոչ միայն «Արարատ» ֆիլմը...

Նշենք, թէ նման քարոզչական գիտնականներ...

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ԼԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փախաբան «Ազգային» մեջ...

ՄԱՐԿԱԶԳՆԵՐԸ բացատրություն են: Մահագր կ'ընդունուի...

ՔԵՍԱՊԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱՆՈՒՄԸ՝ ԸԱՍԱԶՁԱՅԻՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

«ԱՐՅԱՆ» ՊԱՐԱՆՈՒՄԻՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԵԼՈՅԹԸ

Համագրային Քեսապի «Համա Օհանյան» մասնաճյուղը...

Անոնք այսօրուան նորաչափ սերունդին...

Նոյն տարին, 1988ին Քեսապի մէջ Համագրային մասնաճյուղը...

Մշակութային կեանքը նոր չէ որ կը սկսէր, մինչև այդ Քեսապ արդէն ունեցած էր մշակութային կեանքի հարուստ անցեալը...

1988ի ամրան Քեսապի իրադարձութիւնները...

Անոնք այսօրուան նորաչափ սերունդին...

Համագրային մասնաճյուղը վարչութեան անուանով բացման խօսքը...

Բերիոյ թեմի բարեջան առաջնորդ Գեորգ Տ. Սուրբնի Ս. արք. Գաթարոսեանի Սուրբ Շրջ. վարչութեան հովանաւորութիւնը...

աշխատանքին արդիւնքը ի յայտ եկաւ յայտագրի առաջին պարին...

Երկրորդ բաժինը ընթացաւ նոյնքան յարգողութեամբ...

Թեյադրելի պիտի ըլլար, որ պարտութեամբ իր առաջին ելոյթի ցանկին վրայ ունենար նաեւ Քեսապի ազգագրական պարմը:

ԿԻԼԻԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԼԱՄԱՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ ԱՂԵՐԹՈՒԹԻՒՆ

Կիլիկիոյ կաթողիկոսութեան բազմատարածք առաջնորդութեան մէջ յատուկ տեղ կը գրաւէ կրօնական դաստիարակութիւնը...

Անոնք այսօրուան նորաչափ սերունդին...

ԼԵՂՈՒԱԿԱՆ ՓՆԹՈՒԹԵԱՆ ՅԱՆԴԻՄԱՆ ՅԱՆՑԱԳՈՐԾ ԼԻՌՈՒԹԻՒՆ...

Այսպէս նախանշելով՝ աղքատներուն մէջ մեր լեզուն մեր հոգեւոր հայրենիքի ամենապարզ և պարզագոյն հայրենիքն է...

ՆԱԶԻԿ ՅՈՎԱՆԻՍԵԱՆ, «Գրական թերթ», 11 Յունիս 2003

Վերջապէս: Ահագանգ կը հնչէ Հայաստանի Գրողներու Միութեան պաշտօնաթերթ «Գրական թերթ»-ի 11 Յունիս 2003ի սիւնակներէն: Նազիկ Յովհաննիսեան ստորագրած է յօդուած մը, որուն խորագիրը այնքան յայտնի է, որ անոր հետեւ չկարող է չլինել «Նազիկ Յովհաննիսեանի մէջ աղճատուող հայրենի մասին» իր խօսքերը իրեն վերաբերող կական արտասահմանի վրայ, ուր մօտաւոր եւ աղքատացած հայրենի գոհանալու քաղաքականութիւնը քաղաքական գործնապաշտութիւն կը համարուի: Ինչո՞ք ըստ յայտնի է չըսել՝ տնքում է հայաստանում եւ Սփիւռքում:

Ինչէ՞ր կ'ըսէ Նազիկ Յովհաննիսեան: Մէջբերենք: Դժբախտաբար, լեզուական բազմապիսի չարաշահուածները եւ աղաղակող սխալները հաւուր չափերի են հասնում մերօրեայ եւ գրական, եւ խօսակցական լեզուում:

Սկսենք ամենատարածուած «կամաւոր մուրացկանութիւնը», որով անհասկացալի բողոքներով յայտնաբերուած հայրենիքի հնչելը, կարճատեւ կամաւորութեամբ անհասկացալ անգիտներին միանգամայն հասկանալի բաների փոխարէն լեզու են մուտք գործում օտար այնպիսի փոխառեալ բաներ, ինչպիսիք են՝ «Բուրձնի» ու «Գրողները», սակայն, տեղեկագիր հրատարակել չի լինել, իսկ գործընկերները չեն գտնուել, կամ էլ տանցեցեցին բժշկական համալսարանում դասընթացը կրճատելու շարքը չի սկսուի, այդպէս էլ՝ կոնստրուկտիվը, որը պարզապէս «կուլպագրել» է հայկական մամուլը:

Մեր լեզուի հանդէպ խղիւղ, պարտքի ու պատասխանատուութեան բացակայութեան մթնոլորտում աւերածութիւնները ծաւալում են նոյնիսկ քերականական մեկերդմիշտ ընդունուած ամենապարզ կանոններում:

Եւ այսպէս յանգագործ լուրքերով մենք հանդուրժում ենք աւերածութեան հասնող այս ահաւոր լեզուական փլուզումները, որը սպառնում է յիշույթանքը, տրամաբանի-փաստարկելու ունակութեան, առհասարակ մարդկային մտածողութեան, զգայարաններին, որոնք բոլոր ժողովուրդներին համար մնում են ազգային: Խոցում-խաբարում է հայրենի մտածողութեան ձուլածոյ համակարգը, լեզուի երաժշտականութիւնը, առողջանութեան, շեշտադրման համակարգը, աւերում են չեղելու անհասկացալ կերպով... «այդպէս սնքում է հայրենի Հայաստանը»:

Նախընտրեցի Նազիկ Յովհաննիսեանի ահագանգէն փունջ մը մտածումներ առանձնացնել, առանց ամփոփելու գանտը: Սփիւռքի մէջ կարգ մը հաւատաւորներ տասնամեակներէ ի վեր կրկնած են, թէ վտանգուած է լեզուն եւ որուն իբրեւ հետեանք՝ մեր ինքնութիւնը: Ու թո՛ւսանմանակ հայրենի ղողղեցին ուսուցիչներ փոխ առնուած բաներով, ուրիշներ, աւելի առաջ, ժողովրդական գրականութիւն մշակելու ցանկութիւնը անհեթեթ համամտութիւններու հասցնելով՝ թրջական կամ այլ լեզուներու բաներ ներածեցին: Ներկայիս, ենթադրեալ արդիականութեան հեղքով, ամերիկայի կը ներխուժէ ժողովրդական խօսակցութեան, քաղաքական ճառի, պատկերասփիւռի եւ մամուլի մէջ: Նազիկ Յովհաննիսեան կը խօսի կամաւոր մուրացկանութեան մասին, որ մեր մէջ պիտի մշակէ ընկեցիկի հոգեբանութիւն՝ աղքատներով բազմադարեան ժողովուրդի մը ինքնուրոյնութիւնը, աղքատներով մայրենին: Չի խօսիր երգերաժողութեան հայու հոգիին հետ անհարագատ կապկուտներու մասին: Հայաստանի պատկերասփիւռէն Հայ մանուկներ եւ պատանիներ երգի մրցանքի կը մասնակցին, տասնհինգ թիկնածուներէն քանի մը հոգի միայն հայրենի կ'երգէ: Ի՞նչ կ'ուզենք փաստել, ցոյց տալ, ո՞ր հասնելու համար:

Այնքան իրաւացի է Նազիկ Յովհաննիսեան, երբ կը խօսի լեզուական փլուզումներու մասին: Նոյնիսկ հայրենի գիտնորդներ կը սարսափին մարդու հայրենի խօսելու եւ կը նախընտրեն փողոցի փնթի հայրենի, ժողովրդական ըլլալու կամ պարզապէս չզիտանուելու պատճառով: Հասած ենք հոն, ուր փողոցը իր մայրենիի աղաքտուած իբրեւ չափանիշ կը պարտադրէ: Հայրենի թերթի մը խմբագիրը չ'ուզէր բայց իր հիշել խոնարհումով գործածել, քանի որ ընթերցողները կրնան ըսել, որ ինչ հայրենի չի դիտար, եւ մեր թերթերու վերտառութիւններուն մէջ կը բազմի գոյութեան իրաւունքը չունեցող ընդունեցը, փոքան ընդունեցաւ, կամ թրջեցէն փոխառուած եւ բառի մէջտեղ յայտնուող մտաւորական տեղ կ'ըլլայ եւ կը գրենք ու կ'ըսենք՝ ձեռքերն ինչ, յօդուածն ինչ, թերթինը:

Նազիկ Յովհաննիսեանի յօդուածը կարապի՞ երգ է, թէ մարտահրաւեր: Ի դէպ, Գրողներու Միութիւնը մտածած է «Գրական թերթ»-ի այս համարին օրինակները դրկել մեր Ազգային ժողովրդի անդամներուն, նախարարներու, խմբագիրներու եւ պատկերասփիւռի բոլոր աշխատակողներուն, խօսակցութեան, նկարահանողներուն, լրագրողներուն, նաեւ՝ Սփիւռքի, որպէսզի պահ մը մտածեն, թէ ինչպէս մասնակցի եւ մեղակցի են մայրենիին հանդէպ կիրարկուող փնթիւթեան:



# Միջազգային Քաղաքական Կեանք

## ԻՐԱՔԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՕԳՆԷ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ, ՈՐՊԵՍՁԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԻ ԻՐԱՔԵԱՆ ԳԱՂՏՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆ ԻՐԱՆԸ ԼՐՏԵՍՈՂ ԹԵՒԸ

Վստահելով իրաքի քաղաքական կուսակցություններին մէկուս օժանդակութեան, Միացեալ Նահանգներ լծուած են իրաքի սարսափ ազդող գաղտնի գործակալութեան վերակազմութեան: Այս գործակալութեան մօտ առաջնահերթութիւններէն մէկը պիտի ըլլայ իրանը լրտեսելը:

Իրաքի ազգային Բոնկրէյնը, որուն ղեկավարն է իրաքէն աքսորուած եւ այժմ իրաքը կառավարող յանձնաժողովի անդամ Ահմատ Շալապի, կ'ըսէ, թէ պաշտօնատարներ հանդիպած են իրաքի գաղտնի սպասարկութեան իրանը եւ թուրքի իրան լրտեսող թեւերուն հետ: Գաղտնի սպասարկութեան պատասխանատուներ ներկայացուցած են փաստաթուղթեր եւ անդամակցած վերականգնեալ սպասարկութեան մարմիններ:

Իրաքի Ազգային Բոնկրէյնի պատասխանատուներէն Ապտուլազիզ Բուպայի, որ գաղտնի սպասարկութեան անձնակազմը ձեւաւորելու աշխատանքներուն վերահսկողն է, ըսաւ, թէ ամերիկացիք լաւապէս տեղեակ են իր կուսակցութեան կատարած այս աշխատանքին: Աւելին, իրաքի գաղտնի սպասարկութեան այս մարմինն անդամակցողներ կ'ըսեն, թէ Միացեալ Նահանգներ ուղղակիորէն կը ղեկավարեն այս գործակալութիւնը:

Մեր ըրածը յստակ է՝ տեղեկութիւններ կ'ուղարկենք Փենթագոնի պատասխանատուներուն, անոնք տեղեկ են մեր աշխատանքէն, համազոր-ծակցութիւն գոյութիւն ունին: մեր մէջ ունինք պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտի ներկայացուցիչներ» ըսաւ Բուպայի:

Սակայն Միջին Արեւելքի կարգ մը մասնագէտներու համաձայն գաղտնի սպասարկութեան այս թեւը վերընձիւղելը՝ յատկապէս կառավարութեան մը հաստատումէն առաջ, ժխտական անդրադարձ կրնայ ունենալ:

«Այս քայլը վատ նախընթաց մը կը ստեղծէ, որովհետեւ տակաւին կառավարութիւն մը չէ



կազմուած եւ որովհետեւ Շալապիի կուսակցութիւնը փոքրամասնութիւն մըն է եւ չի ներկայացներ իրաքցիներու մեծամասնութիւնը», ըսաւ Եգիպտոսի եւ Իսրայէլի նախկին ղեկավարն է «Միտլ Իսթ Ինսթիթիյութ»-ի տնօրէն Էտուրտ Ուոքըր: Կարծեմ խնդրայարոյց քայլ մըն է վերակազմել գաղտնի սպասարկութեան մէկ թեւը, երբ տակաւին իրաքեան գաղտնի սպասարկութեան շուրջ ան-պատասխան հարցումներ կան», աւելցուց ան:

Սպասարկութեան նախկին անդամները վերստին գործի լծուելու աշխատանքը նոյնպէս չի համարեն Պատմ» կուսակցութեան մէջ: Անոնք ամերիկեան քաղաքականութեան:

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, թէ իրանի նկատմամբ մտահոգութիւններ պատճառ դարձած են, որ սպասարկութեան այս թեւը շուտափոյթ կերպով վերակազմելու: Շեշտելով որ Միացեալ Նահանգներ քաջ գիտեն, թէ իրանը լրտեսող թեւը իրաքեան սպասարկութեան խիստ զօրաւոր է, տրուած ըլլալով որ

իրան վտանգ սպառնացած է իրաքի:

Կը խօսուի նաեւ, թէ պիտի վերակենդանացուի իրաքեան գաղտնի սպասարկութեան Սուրիան լրտեսող թեւը:

Բուպայի ըսաւ նաեւ, թէ իրանի կողմէ իրաքի ներքին հարցերուն միջամուտ ըլլալու փորձերու առաջը առնելու համար է, որ առաջնահերթութիւն դարձած է իրանը լրտեսող թեւի վերակազմումը: «Քաղաքական կուսակցութիւններ կան, որոնք ղրխաւոր եօթը կուսակցութիւնները չեն, եւ իրանի հետ սիրաբանութեան մէջ են», ըսաւ ան, «Կարծեմ իրան միջամուտ կը դառնայ իրաքի հարցերուն: Անոնք այդ մէկը փորձած են ընել երկար տարիներ»:

Սպասարկութեան իրանի բաժանմունքի անդամներուն մօտիկ եղող անձնաւորութիւններ կ'ըսեն, թէ վերակազմութիւնը աշխատանքները սկսած են շ ամիս առաջ, երբ իրանի հիւլէական զէնքերու ծրագրին շուրջ տագնապալից միջնորոտ յառաջացաւ:

«ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄՁ»

## ԻՆՉ ՈՐ ԻՍՐԱՅԷԼ ՊԱՂԵՍՏԻՆԻՆ Կ'ԸՆԷ, ՄԵՆՔ ՆՈՅՆԸ Կ'ԸՆԵՆՔ ԻՐԱՔԻՆ

Քանի մը օր առաջ Պաղտատի մէջ ամերիկեան զօրքերը 17 բեռնակառք քար եւ աղբ փոխադրեցին ղէպի Պաղտատի օդակայանի գաղտնի մէկ վայրը: Ոչ մէկ լրագրող տեղեկագրեց այդ սոսկալի գործողութեան մասին, նոյնիսկ եթէ տեղեկ էին, որովհետեւ այդ աղբը կամ թափօնը հետեւանքն էր ամերիկեան օդուժին գործադրած մէկ ջարդին՝ իրաքի վրայ ռմբակոծումներու աւարտին:

Ամերիկացիները կը հաւատային, որ Սատտամ Հիւսէյն պատասխան էր Պաղտատի Մանսուր կոչուած արուածանին մէջ, ուստի գիտնալով հանդերձ, որ շրջանը լեցուն է քաղաքայիններով, եւ գործողութիւնը «վտանգ զերծ» պիտի չլլայ, անոնք կործանիչ ուժերու նետեցին Մանսուրի խիտ բնակուած թաղամասերուն վրայ: Անոնք սպաննեցին 16 քաղաքայիններ, ներառեալ՝ երեխաներ. սակայն ո՛ր էր Սատտամ: Յուսալքութեան իբրեւ արդիւնք՝ Պաղտատի գրաւումէն շուրջ երկու ամիս ետք անոնք սկսան պրպտել Մանսուրի աւերակոյտը: Միացեալ Նահանգներու մէջ գիտնականներու պարտականութիւն պիտի տրուի Սատտամին «Տի. Էն. Էյ.»-ը գտնել քարակոյտերուն մէջ:

Վստահ չեմ, եթէ նախկին պատահարներն են, որ առիթ կու տան ապագային յաւելեալ պատերազմի ոճիրներու գործադրման, կամ կրկնուող ղէպը մը առիթ կու տայ մարդոց արդարացնելու նախկինները, սակայն Մանսուրի ղէպը մեզի չի՛ յիշեցնէր արդեօք քանի մը ամիս առաջ Կազայի մէջ Արիէլ Շարոնի գործադրած մէկ գործողութիւնը, երբ ան իսրայէլացի օդաչուի մը հրահանգեց հսկայ ուժով մը նետել Կազայի վրայ, որ աւերեց չէնք մը, սպաննեց Համասի պատասխանատու մը, եւ ինչպէս միշտ, զոհ գացին 16 պաղեստինցի քաղաքայիններ, ներառեալ՝ երեխաներ: Մենք դատապարտեցինք Շարոնի անմեղներ սպաննելու այդ արարքը, որ ըստ իրեն, «մեծ յաջողութիւն» մըն էր: Սակայն ի՛նչպէս կրնանք նոյն կեցուածքը որդեգրել հիմա, երբ լուռ ենք Մանսուրի մէջ մեր կատարած սպանութիւններուն մասին:

Կ'ուզե՞նք քննադատել իսրայէլի բանակը Այսրյորդանանի եւ Կազայի մէջ քար նետողները վայրագօրէն սպաննած ըլլալուն համար: Ուստի պէտք է զգուշ ըլլանք հիմա, որ ամերիկեան բանակը նոյնը կ'ընէ ֆալուճայի մէջ:

Կ'ուզե՞նք պահանջել կասեցումը Երուսաղէմի ուսական հարցաքննութեան կեդրոնին մէջ պաղեստինցի բանտարկեալներուն չարչարանքներուն: Աֆղանիստանի Պաղտատ բանտին մէջ երբք բանտարկեալներու ամերիկացի Քրոջաքննողներուն պատճառած «հարցաքննութեան ընթացքին մահը» եւ կուսակցական գաղթականութիւնը մեր մօտիկ անցեալի պատմութեան մէջ ունենալով՝ լաւ կ'ըլլայ, որ չխօսինք իսրայէլի գործադրած չարչարանքներուն մասին:

Մենք մեծ աղմուկ բարձրացուցինք անցեալ տարի, երբ իսրայէլի անպարկեշտ զինուորները խոշտանգեցին եւ կողոպտեցին պաղեստինեան տուները Ռամալլայի մէջ: Մենք այլեւս չենք կրնար այդ մասին խօսիլ, որովհետեւ շատ մօտիկ անցեալին ամերիկեան անդատախարակ զինուորները կողոպտելով քաղցին ղէպի Պաղտատի օդակայան Յ Ապրիլի անոն գրաւումէն երեք օր ետք: Ապրիլի «Թայմ» ամսաթերթը այս պատմութեան լոյս ընծայելուն համար: Բայց հանդիք այլեւս չբնադատենք իսրայէլի վատ զինուորները:

Երուսաղէմը միաձայնօրէն դատապարտեցին իսրայէլի կողմէ «փնտուռած» պաղեստինցիներուն սպանութիւնները կամ «թիրախով սպանութիւնները», ինչպէս իսրայէլ եւ Պի. Պի. Սի.-ն կը նախընտրեն կոչել: Սակայն այժմ ամերիկացիները կը յոխորտան իրենց գործադրած նոյնպիսի թեքիչներով (Եմէնի, իրաքի եւ Աֆղանիստանի մէջ), եւ մենք պէտք է լուենք:

Անցեալ տարի իսրայէլացիները մէջտեղ բերին պաղեստինցիներէ գրաւուած փաստաթուղթերէ կազմուած թղթածրար մը՝ «փաստերու» համար, թէ Արաֆատ իսրայէլի ղէպ «հազարեկողութիւն» կը քաջալերէր: Միայն թարգմանուած եւ գեղծուած այդ թուղթերը այդպիսի ոչինչ կը փաստէին: Սակայն իրաքի պատերազմէն առաջ թոնի Պլէրին ներկայացուցած կեղծ եւ «խորամանկ»

թղթածրարէն ետք ո՞վ ենք մենք, որ իսրայէլը քննադատենք իր սուտերուն համար:

Եւ մենք ի՛նչպէս կրնանք ըողոքել իսրայէլի կողմէ ՄԱԿի 242րդ յօդուածին խախտումին եւ պաղեստինեան հողերուն գրաւման ղէպ, երբ Միացեալ Նահանգները գրաւած են իրաքի ամբողջ պատմական տարածքը անօրինաբար երկրին վրայ արշաւելէն, հազարաւոր քաղաքայիններ սպաննելէն եւ քարիւղի հանքերուն տիրելէն ետք եւ նոյնիսկ չլրնալով ձերբակալել այն բռնատէրը, որ կը կեղեքէր իր իսկ ժողովուրդը (դեռ չխօսինք գանդուածային բնաջնման գէնքերուն մասին, որոնք գոյութիւն չունին...):

